# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
## 05.12.2022թ. կնքված N <<ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-1>> ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «  21  » հուլիս 2023թ.

Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Խումարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 05.12.2022թ. կնքված N<<ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.13-րդ կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղուկ վառելիքի շուկայական գները զգալիորեն նվազել են, սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան 05.12.2022թ-ին կնքված թիվ << ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-1>> ծածկագրով Պայմանագով նախատեսված բենզինի 1000լ մատակարարվող քանակի համար սահմանել նոր գին՝ համապատասխանաբար ռեգուլյար տեսակի բենզինի 1 լիտրի համար **440** /չորս հարյուր քառասուն/ ՀՀ դրամ և Հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում և Հավելված 2-ում՝ վճարման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ:

1.2 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված ապրանքները /այսուհետև Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց համար:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրով սահմանված միավոր գների փոփոխության արդյունքում Պայմանագրի ընդհանուր գումարը սահմանվում է **1 573 000** (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Վաճառողի կողմից մատակարարված ապրանքների դիմաց Գնորդը վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ին համապատասխան:

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) չորս էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ-ն:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ**
**Ք.Երևան Ալեք Մանուկյան-5**
**ՀՎՀՀ 01541435**
**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**
**h/h 1150009581381374**
**Գործադիր տնօրեն Գ.Խումարյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**Մաքս Օիլ ՍՊԸ**
**Ք.Երևան , Էրեբունի 12/4**
**Ամերիաբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 1570026452480100**
**ՀՎՀՀ 02662703**
**Տնօրեն՝ Կ. Մելքոնյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Հավելված N
« 05 » դեկտեմբեր 2022 թ. կնքված
ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը |
| 1 | 09132200/503 | Բենզին ռեգուլյար | Ռոսնեֆտ, բենզին, ռեգուլյար, Աի-92-Կ5, Ռոսնեֆտ ԲԸ, Ռոսնեֆտ, բենզին, ռեգուլյար, Աի-92-Կ5 | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն: Մատակարարումը՝ կտրոններով: | լիտր | 4000 | 325 | 325000 | 1000 | մինչև 20.02.2023 |
| | | | | | | | 340 | 340000 | 1000 | մինչև 30.04.2023 |
| | | | | | | | 440 | 440000 | 1000 | մինչև 31.07.2023 |
| | | | | | | | 468 | 468000 | 1000 | մինչև 31.10.2023 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի Հանրային ՌադիոընկերությունՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
h/h 1150009581381374
Գործադիր տնօրենի Գ.Խումարյան

______________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Մաքս Օիլ ՍՊԸ
Ք.Երևան , Էրեբունի 12/4
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570026452480100
ՀՎՀՀ 02662703
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

______________________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 05 » դեկտեմբեր 2022 թ. կնքված
ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ապրանք | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132200/503 | բենզին | 0 | 325000 | 325000 | 325000 | 665000 | 665000 | 665000 | 1105000 | 1105000 | 1105000 | 1573000 | 1573000 | 1573000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի Հանրային ՌադիոընկերությունՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
հ/հ 1150009581381374
Գործադիր տնօրենի Գ.Խումարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Մաքս Օյլ ՍՊԸ
Ք.Երևան , Էրեբունի 12/4
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570026452480100
ՀՎՀՀ 02662703
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ